4

Քննարկվել և հաստատվել է
ակադեմիայի հոգաբարձուների
խորհրդի 2019թ.թիվ 1 նիստում

Հոգաբարձուների Խորհրդի նախագահ
Ա. Մ. Քուշկյան

EREBUNI

Էրեբունի բժշկական

ակադեմիա հիմնադրամի

2019-2025 թթ.

զարգացման ռազմավարական

ծրագիր

Երևան 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երևանի «Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամը

Ակադեմիայի տեսլականը .....

Ակադեմիայի առաքելությունը .....

Հիմնարար արժեքները .....

Ռազմավարական հիմնախնդիրներ

Հիմնախնդիր 1 Մասնագետների պատրաստում

Հիմնախնդիր 2 Մասնագետների պատրաստման որակի բարձրացման միջոցառումներ

Հիմնախնդիր 3 Ուսումնադաստիարակչական աշխատանքներ

Հիմնախնդիր 4 Ուսանողների քանակակազմի ձևավորման աշխատանքներ

Հիմնախնդիր 5 Դասախոսների հավաքագրման և որակավորման բարձրացման միջոցառումներ

Հիմնախնդիր 6 Ուսումնամեթոդական, գիտաստեղծագործական աշխատանքներ

Հիմնախնդիր 7 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական հենքի հարստացում

Հիմնախնդիր 8 Դասախոսական ուսումնաօժանդակ վարչատնտեսական և ծառայողական անձնակազմի վարձատրման ֆոնդը և ֆոնդի մեծացման հետ կապված աշխատանքներ, միջոցառումներ

Հիմնախնդիր 9 Հանրային առողջության պահպանման հարցեր

Հիմնախնդիր 10 Միջազգային կապեր և համագործակցության զարգացում

Հիմնախնդիր 11 Կառավարման արդյունավետության և վարչական ծառայությունների որակի բարձրացում

Երեբունի բժշկական ակադեմիա հիմնադրամը

Երեբունի ակադեմիա հիմնադրամը հիմնադրվել է 2019թ.: Հիմնադրման օրվանից ակադեմիայի գործունեությունն ուղղված է եղել նախ միջին մասնագիտական կրթության որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, կրթական ծրագրերի համապատասխանեցմանը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, ազգային կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության, ուսումնական գործընթացի մատչելիության և բարձր որակական մակարդակի ապահովմանը:

Ակադեմիայի տեսլականը

Երեբունի բժշկական ակադեմիան դարձնել միջին մասնագիտական բժշկական բարձր մակարդակի կրթություն ապահովող ուսումնական հաստատություն:

Ազգային կրթությունը համադրելի դարձնել կրթության բովանդակության միջազգային չափանիշներին՝ ուսումնառողներին տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող կարողութենամետ կրթություն, որը հնարավորություն կտա ազատ տեղաշարժի և դիպլոմների համարժեքության ճանաչման:

Ակադեմիայի առաքելությունը

ՄՈՒՀ առաքելությունն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում հանրապետության առողջապահական ոլորտի համար պետական կրթական չափորոշիչներին և միջազգային չափանիշներին համապատասխան միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումը ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ տնտեսական զարգացման պահանջներին, ազգային և համամարդկային ոգով դաստիարակված անձի և քաղաքացու համակողմանի ձևավորումը, որը նպատակաուղղվում է անհատների, ընտանիքների, հասարակության առողջությանը և կյանքի որակի բարելավմանը:

Հիմնարար արժեքները

Ակադեմիայի գործունեության հիմքում դրված են ներքոհիշյալ հիմնարար սկզբունքային արժեքները.

Մատչելիություն, թափանցիկություն, հավասարություն

Ակադեմիան կարևորում և ապահովում է յուրաքանչյուր ուսումնառողի մատչելի, հավասար, որակյալ մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը, կիրառում է խրախուսանքներ, ուսման վարձերի զեղչեր, անհրաժեշտության դեպքում տրամադրում ֆինանսական աջակցություն, ապահովում միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման թափանցիկություն և օբյեկտիվ գնահատման գործընթաց:

Ուսանողի համակողմանի զարգացում

Ակադեմիայում տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքը նպաստում է ուսումնառողների անհրաժեշտ բարոյահոգեբանական կերտվածքի ձևավորմանը՝ գաղափարաքաղաքական, իրավական, ֆիզիկական, գեղագիտական, աշխատանքային, բարոյահոգեբանական, բարեգործական, հայրենասիրական, ռազմահայրենասիրական ուղղություններով, կարևորում է ուսումնառողի՝ որպես անհատի բազմակողմանի զարգացումը՝ համամարդկային և ազգային շահերին համապատասխան:

Մանկավարժադասախոսական որակյալ կազմ

Ակադեմիայի արդյունավետ գործունեության, դասավանդման որակի անհրաժեշտ մակարդակի ապահովման գրավականը՝ գործին նվիրված մասնագիտական և մարդկային բարձր հատկանիշներով օժտված մանկավարժական կազմն է:

Ուսումնառողի մասնակցություն

Ապահովել ակադեմիայում ուսանողակենտրոն քաղաքականության գործընթաց, ուսանողական ինքնակառավարման, ինքնավարության ծավալում ու զարգացում, նպաստել ուսանողների իրավունքների և պարտականությունների կատարմանը, ուսումնառողների գիտահետազոտական գործունեության կազմակերպմանը, ստեղծագործական, մտավոր, մշակութային և հոգևոր զարգացմանը: Ապահովել ուսումնառողների համագործակցությունը ղեկավար մարմինների հետ՝ որպես ուսումնական խմբերի ավագներ, ուսխորհրդի անդամներ, նախագահներ, արհմիության նախագահներ, նրանց ընդգրկել տարբեր խորհուրդների կազմում, որը կնպաստի նրանց քաղաքացիական-հասարակական պատասխանատվության բարձրացմանը, ինքնահաստատմանը:

Միջանձնային հարաբերություններում ստեղծել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, համախմբվածություն, փոխադարձ հարգանքի և վստահության միջավայր, որը կնպաստի դասախոս-ուսումնառող ճիշտ հարաբերությունների ձևավորմանը:

Ռազմավարական հիմնախնդիրներ

Նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ազգային կրթության զարգացման ռազմավարական ծրագիր, առաջ քաշել հիմնախնդիրներ, որոնք հնարավորություն կտան համեմատաբար փոքր ներդրումներով տալ առավելագույն արդյունք և նպատակաուղղված հասնել ակադեմիայի առաքելության իրականացմանը:

Սույն ծրագիրը կազմված է 2019-2025 թվականների կրթության զարգազման վեցամյա ծրագրի տեսլականի համաձայն:

Հիմնախնդիր 1

Մասնագետների պատրաստում

Ակադեմիայում իրականացվում են միջին մասնագիտական բժշկական 5 /հինգ/ կրթական ծրագրեր :

0912.02.5 «Մանկաբարձական գործ» - մասնագետի որակավորումը՝ մանկաբարձ

0916.01.5 «Դեղագործություն» - մասնագետի որակավորումը՝ դեղագործ

0913.02.5 «Քույրական գործ» - մասնագետի որակավորումը՝ բուժքույր / բուժեղբայր

0915.01.5 «Բուժական կոսմետոլոգիա» - մասնագետի որակավորումը՝ բուժքույր/բուժեղբայր կոսմետոլոգ

0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» - մասնագետի որակավորումը՝ ատամնատեխնիկ

Վերոնշյալ բոլոր ծրագրերն իրականացվում են և միջնակարգ /լրիվ/ ընդհանուր և հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա՝ առկա գործող մասնագիտությունների հաստատված պետական կրթական չափորոշիչների համաձայն:

Ուսումնական գործընթացն իրագործվում է դրանց համապատասխան կազմված և հաստատված ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով՝ առկա և հեռակա (0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտությամբ) ուսուցման ձևերով:

Նախատեսվում է վերանայված և բարեփոխված չափորոշիչների պահանջներին համապատասխան մասնագիտությունների վերանայված ուսումնական պլաններով մոդուլային ուսումնական ծրագրերով կազմակերպել ուսումնական գործընթացը, որը կնպաստի դիպլոմների համարժեքության, փոխճանաչման և ուսանողների ազատ տեղաշարժին:

Իրականացնել ակադեմիայի շրջանավարտներից և կրթական ծրագրերից հիմնական գործատու կազմակերպությունների բավարարվածության աստիճանի վերաբերյալ համալիր հետազոտություններ և վերլուծություններ՝ ծրագրերի արդիականացման և շրջանավարտների աշխատանքի անցնելու կարողությունների բարձացման, երաշխավորությունների մշակման և կատարելագործման նպատակով:

Հիմնախնդիր 2

Մասնագետների պատրաստման որակի բարձրացման միջոցառումներ

Մասնագետների պատրաստման բարձր որակ ապահովելու համար անհրաժեշտ է .

- Հարստացնել առկա ուսումնամեթոդական համալիրները:
- Ձեռք բերել, ստեղծել հայերեն լեզվով, հանրամատչելի, միջին մասնագիտական բժշկական կրթությանը համապատասխան դասագրքեր, ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ այն մասնագիտությունների և առարկաների համար, որոնք դեռևս չունեն համապատասխան դասագրքեր և հաստատել գիտամեթոդական խորհրդում:
  - Մեծ ուշադրություն դարձնել գործնական ունակությունների զարգացմանը, հմտությունների մշակմանը, հասնել ուսումնական կլինիկական բազաների հետ պայմանագրային այնպիսի փոխհարաբերությունների, որ դրանց ղեկավարությունը և բուժանձնակազմը ստեղծեն հնարավոր բոլոր պայմանները ուսանողների պրակտիկ ուսուցման համար և կրեն որոշակի պատասխանատվություն:
  - Ստեղծել պրակտիկ ունակությունների գնահատման թերթիկներ (չեկ լիստեր) և ապահովել կլինիկական առարկաների կարողությունամետ ուսուցումը, հասցնել այն ուսումնառողների մոտ 100% գործնական հմտությունների, ունակությունների մշակման:
  - Ուսումնառողների մոտ մշակված գործնական ունակությունները ստուգել ամփոփիչ պետական ատեստավորման քննությունների ընթացքում և հիվանդի անկողնու մոտ :
  - Մեծ ուշադրություն դարձնել անհետաձգելի բուժօգնության դասավանդմանը և հասնել այն մակարդակի, որ յուրաքանչյուր ուսումնառող կարողանա իր ստացած տեսական ու գործնական գիտելիքներով անհրաժեշտ օգնություն ցուցաբերել աղետների, պատերազմների ժամանակ: Այդ նպատակով սերտ կապ հաստատել ՀՀ ԱԻՆ, ԿԳՄՍՆ, ԱՆ, սոցապ նախարարությունների հետ, համայնքի քաղաքաշտպանության շտաբի հետ, ձեռք բերել տեսահոլովակներ, հաճախակի կազմակերպել դասախոսություններ:
  - Մեծ ուշադրություն դարձնել ուսումնառողների մոտ ֆիզիկական կուլտուրայի զարգացմանը:
  - Մասնակցել բուժ պրոֆիլակտիկ աշխատանքներում, քույրական գործում պրակտիկ ստանդարտների մշակման գործընթացին
  - Բարձրացնել ուսումնաարտադրական և նախաավարտական պրակտիկաների մեթոդական ղեկավարների դերը, անմիջական ղեկավարներ նշանակել ակադեմիայի բուժքույր կամ բժիշկ դասախոսներից՝ վարձատրությամբ, որպես մեթոդական հրահանգիչներ և նրանց միջոցով ուժեղացնել վերահսկողությունը կլինիկաներում անցկացվող ուսումնաարտադրական և նախաավարտական պրակտիկաների վրա:

- Ուսումնաարտադրական և նախաավարտական պրակտիկաների ծրագրերում ներդնել ներհիվանդանոցային հակահամաճարակային վերահսկողության 36 ժամյա ծրագիրը:
- Վերանայել պետական ամփոփիչ ատեստավորման ծրագիրը, համալիր միջառարկայական ամփոփիչ պետական քննության ընթացքում պարտադիր կարգով նախատեսել իրավիճակային խնդիրների լուծում և գործնական հմտությունների ստուգում մասնագիտական առարկաներից և անհետաձգելի օգնության ցուցաբերումից:

Լայնորեն կիրառել դասի արդյունավետությունը բարձրացնող միջոցները.

ուսումնադիտողական պարագաներ, սլայդներ, տեսաժապավեններ, պլակատներ, աղյուսակներ, մուլյաժներ, գործիքներ, սարքավորումներ, նյութեր, խնամքի պարագաներ:

Կիրառել.

Իրավիճակային խնդիրներ, թեստեր, դերային խաղեր, խաչբառեր, խճանկարներ, բանավեճեր, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, ստուգատես մրցույթներ և այլ մեթոդներ ու հնարներ:

Ապահովել միանման ուսուցում, հասնել քույրական, մանկաբարձական միջամտությունների ալգորիթմային մակարդակի, դեղագործության, ատամնատեխնիկական գործի տեխնոլոգիաների, փորձարարության և հետազոտական աշխատանքների բարձր մակարդակի:

- Կազմակերպել թեստային համակարգչային քննություններ NCLEX մակարդակով
- Մշակել ուսուցման տարբեր մոտեցումներ և մեթոդներ, գնահատման չափանիշներ, գնահատել ուսանողների բավարարվածությունը
- Զարգացնել ուսանողների տեղեկատվությունը կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման, օժանդակության ծառայությունների մասին:
- Մշտապես ապահովել խորհրդատվական կապը կրթության ազգային ինստիտուտի մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հետ, կատարել նրանց հանձնարարականները, լրացնել և ամեն տարի նորովի ներկայացնել քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների և ինքնավերլուծության ձևաչափը:
- Դասախոսական կազմի դասավանդման որակը բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ, դասախոսություններ, հարցազրուցներ, կոնֆերանսներ, ուսուցողական և բաց դասեր, կատարել դասալսումներ, ապահովել ներքոլեջային վերահսկողությունը ամբիոններում, մշտական մոնիտորինգ, մեծ ուշադրություն դարձնել դասավանդողների գնահատման ընթացակարգի կիրառմանը, նախնական և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգին:

Հիմնախնդիր 3

Ուսումնադաստիարակչական աշխատանքներ

Ուսումնադաստիարակչական աշխատանքները շարունակել իրագործել ներքոհիշյալ ուղղություններով՝

- կազմակերպչական
- ուսումնական
- գաղափարական
- աշխատանքային
- իրավական
- ֆիզիկական
- գեղագիտական
- բարոյահոգեբանական
- բարեգործական
- ռազմահայրենասիրական

Կատարված աշխատանքներին զուգահեռ

Ստեղծվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրային փաթեթ: Ապահովվել է միանման, միասնական դաստիարակչական աշխատանք, /դասղեկի օրացույցային թեմատիկ, ուսանողական խորհրդի պլանի, հասնել ուսանողների հասարակական բարձր ակտիվության, ուսանողական խորհրդի ինքնակառավարման:

Անհրաժեշտ է.

- Սերմանել հայրենասիրություն, մարդասիրություն, սեր ուսման, աշխատանքի նկատմամբ, բարոյական բարձր հատկանիշներ, հավատ ապագայի նկատմամբ, ձգտում իրավական հավասարության:
- Չևավորել առողջ ապրելակերպ ունեցող սերունդ:
- Ստեղծել դասղեկի դպրոց՝ ուսուցանելով մանկավարժական տակտ և մեթոդիկա, անցկացնելով որոշակի դասընթացներ:
- Կիրառելի դարձնել «Էրեբունի» բուժքույրական լրատու գիտագործնական հանդեսը, որն ապահովում է ուսանողությանը, կոլեկտիվին անհրաժեշտ տեղեկատվությամբ ակադեմիայի առօրյայի, առաքելության, նպատակների, կրթական ծրագրերի բարեփոխման, քույրական գործի ռազմավարության, ակադեմիայում տարվող ուսումնադասիարակչական, գիտահետազոտական աշխատանքների, մասնագիտական նորույթների մասին, տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունների վերաբերյալ և այլն:

Հիմնախնդիր 3

Ուսումնադաստիարակչական աշխատանքներ

Ուսումնադաստիարակչական աշխատանքները շարունակել իրագործել ներքոհիշյալ ուղղություններով՝

- կազմակերպչական
- ուսումնական
- գաղափարական
- աշխատանքային
- իրավական
- ֆիզիկական
- գեղագիտական
- բարոյահոգեբանական
- բարեգործական
- ռազմահայրենասիրական

Կատարված աշխատանքներին զուգահեռ

Ստեղծվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրային փաթեթ:

Ապահովվել է միանման, միասնական դաստիարակչական աշխատանք, /դասղեկի օրացույցային թեմատիկ, ուսանողական խորհրդի պլանի, հասնել ուսանողների հասարակական բարձր ակտիվության, ուսանողական խորհրդի ինքնակառավարման:

Անհրաժեշտ է.

- Սերմանել հայրենասիրություն, մարդասիրություն, սեր ուսման, աշխատանքի նկատմամբ, բարոյական բարձր հատկանիշներ, հավատ ապագայի նկատմամբ, ձգտում իրավական հավասարության:
- Ձևավորել առողջ ապրելակերպ ունեցող սերունդ:
- Ստեղծել դասղեկի դպրոց՝ ուսուցանելով մանկավարժական տակտ և մեթոդիկա, անցկացնելով որոշակի դասընթացներ:
- Կիրառելի դարձնել «Էրեբունի» բուժքույրական լրատու գիտագործնական հանդեսը, որն ապահովում է ուսանողությանը, կոլեկտիվին անհրաժեշտ տեղեկատվությամբ ակադեմիայի առօրյայի, առաքելության, նպատակների, կրթական ծրագրերի բարեփոխման, քույրական գործի ռազմավարության, ակադեմիայում տարվող ուսումնադասիարակչական, գիտահետազոտական աշխատանքների, մասնագիտական նորույթների մասին, տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունների վերաբերյալ և այլն:

- Մեծ ուշադրություն դարձնել ուսումնառողների հոգևոր կյանքին , հայոց և կրոնի պատմության դասավանդմանը, զերծ պահել նրանց տարբեր տեսակի աղանդներից , սերմանել առաքելական եկեղեցու քրիստոնեական պատգամները:

Հիմնախնդիր 4

Ուսանողների քանակակազմի ձևավորման միջոցառումներ

Տարիներ շարունակ գործում է դիմորդների մասնագիտական կողմնորոշման խորհուրդը, կազմակերպվում են գործուղումներ, սակայն անհրաժեշտ է.

1. Առավել ծավալուն գործուղումներ կատարել մարզերում:
2. Յուրաքանչյուր ուս. տարվա համար ստեղծել նոր, ուսումնական գործընթացը և ընդունելության կանոնակարգը ներկայացնող գովազդային բուկլետներ:
3. Կազմակերպել ուսանողների արտագնա խմբեր և իրականացնել քույրական, մանկաբարձական գործի, դեղագործության, ատամնատեխնիկական գործի բուժական կոսմետոլոգիայի ստուգատեսներ դպրոցներում:
4. Կազմակերպել համաքոլեջային խոշոր միջոցառումներ, հրավիրել և դրանց, մասնակից դարձնել դպրոցականներին:
5. Հաճախակի դարձնել բաց դռների օրերը, դպրոցականներին և նրանց ծնողներին ծանոթացնել քոլեջի պատմությանը, ավանդույթներին, մասնագիտություններին:
6. Հաճախակի կազմակերպել նկարահանումներ և հանդես գալ հեռուստատեսային տարբեր ալիքներով (ունենալ գովազդային տեսահոլովակներ):
7. Ապահովել գովազդը սոցիալական հարթակներում և լրատվական այլ միջոցներով:
8. Կարիերայի կենտրոնի միջոցով աշխատանք տանել ուսումնառողների և շրջանավարտների հետ, հրավիրել միջոցառումների, միջնորդել ուսման շարունակման և աշխատանքով ապահովման հարցերում, շրջանավարտներին ներգրավել բուժքույրական տեղային և միջազգային ասոցիացիաներում, հատկապես Sigma Theta Tau ասոցիացիայում:
9. Կապ հաստատել ՀՀ բուժկանխարգելիչ հիմնարկների, դեղատների, բուժկոսմետոլոգիական, ստոմատոլոգիական ծառայությունների և այլ գործատուների հետ և ապահովել անհրաժեշտ տեղեկատվություն շրջանավարտների աշխատանքի որակի վերաբերյալ:
10. Պարբերաբար վարել ակադեմիա այցելող հյուրերի, պատվավոր գործընկերների, համագործակցող անձանց կարծիքների, տպավորությունների, առաջարկությունների մատյան:

- Մեծ ուշադրություն դարձնել ուսումնառողների հոգևոր կյանքին , հայոց և կրոնի պատմության դասավանդմանը, զերծ պահել նրանց տարբեր տեսակի աղանդներից , սերմանել առաքելական եկեղեցու քրիստոնեական պատգամները:

Հիմնախնդիր 4

Ուսանողների քանակակազմի ձևավորման միջոցառումներ

Տարիներ շարունակ գործում է դիմորդների մասնագիտական կողմնորոշման խորհուրդը, կազմակերպվում են գործուղումներ, սակայն անհրաժեշտ է.

1. Առավել ծավալուն գործուղումներ կատարել մարզերում:
2. Յուրաքանչյուր ուս. տարվա համար ստեղծել նոր, ուսումնական գործընթացը և ընդունելության կանոնակարգը ներկայացնող գովազդային բուկլետներ:
3. Կազմակերպել ուսանողների արտագնա խմբեր և իրականացնել քույրական, մանկաբարձական գործի, դեղագործության, ատամնատեխնիկական գործի բուժական կոսմետոլոգիայի ստուգատեսներ դպրոցներում:
4. Կազմակերպել համաքոլեջային խոշոր միջոցառումներ, հրավիրել և դրանց, մասնակից դարձնել դպրոցականներին:
5. Հաճախակի դարձնել բաց դռների օրերը, դպրոցականներին և նրանց ծնողներին ծանոթացնել քոլեջի պատմությանը, ավանդույթներին, մասնագիտություններին:
6. Հաճախակի կազմակերպել նկարահանումներ և հանդես գալ հեռուստատեսային տարբեր ալիքներով (ունենալ գովազդային տեսահոլովակներ):
7. Ապահովել գովազդը սոցիալական հարթակներում և լրատվական այլ միջոցներով:
8. Կարիերայի կենտրոնի միջոցով աշխատանք տանել ուսումնառողների և շրջանավարտների հետ, հրավիրել միջոցառումների, միջնորդել ուսման շարունակման և աշխատանքով ապահովման հարցերում, շրջանավարտներին ներգրավել բուժքույրական տեղային և միջազգային ասոցիացիաներում, հատկապես Sigma Theta Tau ասոցիացիայում:
9. Կապ հաստատել ՀՀ բուժկանխարգելիչ հիմնարկների, դեղատների, բուժկոսմետոլոգիական, ստոմատոլոգիական ծառայությունների և այլ գործատուների հետ և ապահովել անհրաժեշտ տեղեկատվություն շրջանավարտների աշխատանքի որակի վերաբերյալ:
10. Պարբերաբար վարել ակադեմիա այցելող հյուրերի, պատվավոր գործընկերների, համագործակցող անձանց կարծիքների, տպավորությունների, առաջարկությունների մատյան:

Հիմնախնդիր 5

Դասախոսների հավաքագրման և որակավորման բարձրացման միջոցառումներ

Դասախոսական կազմը թարմացնել երիտասարդ մասնագետներով.

- Ստեղծել դասախոսների հավաքագրման մրցույթային համակարգ:
- Ապահովել առարկայի դասավանդումը միայն համապատասխան կրթությամբ մասնագետով:
- Իրականացնել դասախոսների դասավանդման որակը բարձրացնող միջոցառումներ.

1. Կատարելագործել գործող սկսնակ դասախոսների դպրոցի աշխատանքը.
2. Դասախոսներին պարբերաբար ուղարկել վերապատրաստումների, կատարել մեթոդական անհատական աշխատանք դասախոսների հետ: Անցկացնել ուսուցողական և բաց դասեր, առաջատար փորձի փոխանակման և նորագույն մեթոդների ուսուցման, ամրապնդման նպատակով:
3. Պահանջել մեթոդ մշակումներ, մասնագիտական ռեֆերատներ, հետազոտական աշխատանքներ, տեղեկատվական աշխատանք համացանցով, անընդհատ գիտելիքների թարմացում նորույթներով, ժամանակակից գրականությամբ:
4. Ապահովել մշտական մոնիտորինգ, պարբերաբար լրացնել դասախոսների անհատական մեթոդական քարտերը, վերահսկել քննաշրջանը, ուսանողներին հաղորդած գիտելիքների մակարդակը, ձևավորել խիստ պատասխանատվության և օբյեկտիվության մթնոլորտ:
5. Կատարելագործել դասախոսների ատեստավորման համակարգը, պահանջել՝ մանկավարժական վարպետություն, մասնագիտական բարձր գիտելիքներ:
6. Պարբերաբար հրավիրել հանրապետության առաջատար մասնագետների, դասախոսություններ կարդալու յուրաքանչյուր առարկայի առավել բարդ թեմաների վերաբերյալ, հաղորդելու նորագույն տվյալներ: Զարգացնել հրավիրվող դասախոսների ինստիտուտը:
7. Ստեղծել և հրապարակել չափանիշներ մանկավարժադասախոսական անձնակազմի մասնագիտական կարողությունների մանկավարժական հմտությունների պարբերական գնահատման համար
8. Խրախուսման նպատակով ընտրել տարվա լավագույն դասախոս, խրախուսել դասախոսների ինքնակրթությունը
9. Շարունակել և զարգացնել դասախոսների պարբերական վերապատրաստումները՝ կրթական նոր տեխնոլոգիաներին տիրապետելու և դրանք ակադեմիայի ուսումնական գործընթացում ներդնելու, էլեկտրոնային ուսուցման դասընթացներ և կրթական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ:
10. Բարձացնել ակադեմիայի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը:

11. Ստեղծել դասախոսների համար համապատասխան պայմաններ ու խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող զարգացման ծրագրերին:
12. Դասախոսների փոքր խմբերի համար աշխատատեղում կազմակերպել ընտրված թեմաներով տեսական և գործնական ուսուցում հանրապետության առաջատար մասնագետների կողմից և մանկավարժական վարպետություն ձեռք բերելու համար կազմակերպել սեմինարներ՝ հրավիրելով վաստակաշատ մանկավարժների:

Հիմնախնդիր 6

Ուսումնամեթոդական, գիտաստեղծագործական աշխատանքներ

Դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակավորումը խթանելու նպատակով.

- Դասախոսներից պահանջել գիտաստեղծագործական աշխատանքներ, դասագրքերի կազմում, թարգմանչական, հետազոտական աշխատանքներ:
- Առկա թեմատիկ ուսումնամեթոդական համալիրը դարձնել համակարգված համալիր ըստ պարապմունքների /տեսական և գործնական պարապմունքների համար/:
- Հասնել օտար լեզվի նվազագույն իմացության:
- Պահանջել համակարգչային գրագիտություն, համացանցից օգտվելու կարողություն:
- Ստեղծել բուժքույրական վիճակագրական հետազոտությունների, ներ-հիվանդանոցային հակահամաճարակային վերահսկողության ընթացիկ աշխատանքների մատյան, «Աշխատանքի անվտանգությունը» քույրական գործում, «Ներհիվանդանոցային հակահամաճարակային վերահսկողություն», «Առողջ ապրելակերպ» թեմաներով ուսումնամեթոդական ձեռնարկներ:

Հիմնախնդիր 7

Ուսումնական հաստատության նյութատեխնիկական հենքի հարստացում

Ակադեմիայի ուսումնական, լաբորատոր և օժանդակ տարածքները լրիվ բավարարում են մեկ ուսանողին լիցենզավորման պահանջներով նախատեսվող մակերեսային նորմերը: Առկա են կրթության կազմակերպման ժամանակակից և պարտադիր պահանջները և պայմանները ապահովող, անհրաժեշտ սարքավորումներ, նյութեր և գույք:

Գործում են և անընդհատ հարստացման պրոցեսում են 58090 կտոր գրականություն ընդգրկող գրադարան՝ համապատասխան ընթերցասրահով:

Արդի պահանջներից ելնելով՝ վերազինել նախնական զինվորական պատրաստության /ՆԶՊ/ կաբինետը, հարստացնել այն ժամանակակից ուսումնամեթոդական պաստառներով, մանրակերտերով՝ պահպանելով կաբինետի հագեցվածության պարտադիր և անհրաժեշտ տարրերը, ստեղծել հրաձգարան...

- Մինչև համընդհանուր ներառական կրթության անցումը ուսումնական մասնաշենքում համապատասխան պայմաններ ստեղծել /սպասարկող սարքեր, կահավորանք, հարմարանքներ և այլն/, նախապատրաստել ուսումնական և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների հատուկ մանկավարժական աշխատողներ...

- Ձեռք բերել մանիպուլյացիաների համար անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, յուրաքանչյուր ենթախմբի համար առնվազն 4-5 հավաքածու:

- Ուսումնական գործընթացում ներդնել տեղեկատվական տեխնոլոգիաներ. ստեղծել համակարգչային լսարաններ, ժամանակակից տեխնիկական միջոցների կաբինետներ ուսումնական հաստատությունում հեռավար /դիստանցիոն/ ուսուցում ներդնելու և կազմակերպելու նպատակով...

- Ամբիոնների վարիչների պահանջագրերի հիման վրա հարստացնել ուսումնատեխնիկական բազան՝ ապահովելով յուրաքանչյուր 2 ուսանողին թեմայի համար անհրաժեշտ բոլոր ուսումնադիտողական պարագաներով, գործնական հմտությունների մշակման համար անհրաժեշտ նյութերով, գործիքներով, սարքավորումներով և այլն: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությունների առարկաների կաբինետների հագեցվածությանը:

- Հարստացնել գրադարանները նորագույն գրականությամբ, ստեղծել էլեկտրոնային գրադարան և էլեկտրոնային քարտադարան:

- Ֆիզկուլտուրայի փակ մարզադահլիճը հարստացնել մարզասարքերով և ստեղծել պայմաններ գեղարվեստական մարմնամարզության, աերոբիկայի և յոգայի ուսուցման համար:

Բարելավել և գործարկել բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի և ձեռքի գնդակի բաց մարզահրապարակը:

Հիմնախնդիր 8

Դասախոսական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական և ծառայողական աշխատակազմի վարձատրման ֆոնդը և ֆոնդի մեծացման հետ կապված աշխատանքներ, միջոցառումներ:

- Արտաբյուջեյի հաշվին բարձրացնել ակադեմիայի դասախոսական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական և ծառայողական անձնակազմի վարձատրման ֆոնդը:
- Բարձրացնել մեկ դասաժամի արժեքը,
- Հասնել աշխատավարձի բարձրացման՝ ըստ դասախոսի որակավորման ցուցանիշների, գիտական կոչումների:
- Ստեղծել ֆոնդ և այդ ֆոնդից կատարել նյութական խրախուսումներ, պարգևատրումներ, կատարել բարեգործական աշխատանքներ՝ այցելելով՝ ծերանոցներ, մանկատներ երեքունի համայնքի անապահով ընտանիքներ, միայնակ ապրող ծերերին:

  Հիմնախնդիրը լուծելու առումով:
- Մեծացնել դիմորդների ընդունման պլանը
- Առավել ծավալել գործուղումները հանրապետության դպրոցներ
- Ստեղծել արտագնա խմբեր և կազմակերպել ուսուցանվող մասնագիտությունների ստուգատեսներ

Հիմնախնդիր 9

Հանրային առողջության պահպանման հարցեր

Այս ծրագիրը ակադեմիայում իրականացվում է ՀՀ ԱՆ հանրային առողջության պահպանման վարչության հետ:

Անհրաժեշտ է.

- Ակադեմիայի ուսանողներին իրազեկել ՀՀ կառավարության որոշումների, հիմնահարցերի, գերակա խնդիրների մասին, որոնք վերաբերվում են առողջ ապրելակերպի ապահովմանը:
- «Առողջ ապրելակերպի ձևավորումը» դարձնել յուրաքանչյուր դասախոսի կարգախոսը: Ապագա բուժաշխատողին ուսուցանել առողջ ապրելակերպի բաղկացուցիչները՝ ստեղծելով հասարակական կարծիք:
- Մատչելի, ճիշտ տեղեկատվություն տալ ծխելու, թմրամոլության, ալկոհոլի չարաշահման և այլ վնասակար սովորությունների վերաբերյալ՝ նշելով առաջացնող հետևանքները, բարդությունները:

- Կազմել հանրամատչելի ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցեր, տեսաժապավեններ, ձայներիզներ, որոնք կլուսաբանեն հանրային առողջության պահպանման հարցերը:
- Մեծ ուշադրություն դարձնել «էկոլոգիայի հիմունքներ» առարկայի դասավանդմանը, էկոլոգիապես մաքուր միջավայրի ստեղծմանը և նրա կարևորությանը մարդու կյանքում:
- Իրականացնել կրթական ծրագրեր սեռական դաստիարակության և սեռավարակ հիվանդությունների վերաբերյալ:
- Առարկայական ծրագրերում մեծ տեղ տալ անձնական և ընդհանուր հիգենայի կանոններին, սանէպիդ ռեժիմի իմացությանը, ճիշտ և ռացիոնալ սնման ռեժիմին:
- Անցկացնել մարմնամարզության նախասիրական պարապմունքներ, կարևորել շարժման դերը առողջության պահպանման գործում:
- Ուսուցման գործընթացում մեծ տեղ հատկացնել տարեց և ծերունական հասակի ազգաբնակչության, սոցիալապես անապահով խավերի առողջության պահպանման հարցերին:

Հիմնախնդիր 10

Միջազգային կապեր և համագործակցության զարգացում

Ակադեմիան համագործակցում է Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության, ԱՄՆ-ի գրանցված բուժքույրերի միջազգային կազմակերպության, Sigma Theta Tau միջազգային բուժքույրական պատվավոր միության ինչպես նաև Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների հետ:

Նախատեսվում են առաջիկայում ամրապնդել համագործակցությունները՝ կատարել փոխադարձ այցելություններ, առաջավոր փորձի փոխանակման՝ գիտելիքների խորացման նպատակով, զարգացնել հեռահաղորդակցական կապը՝ ապահովելով.

- հեռախորհրդատվություններ բժշկության բնագավառում
- հեռակոնֆերանսների անցկացում
- սերվեր կապի միջոցով նույն ինֆորմացիայից համատեղ օգտվելու հնարավորություն
-խորհրդատվական կապ ստեղծել առողջապահության համաշխարհային կազմակերպության քույրական գործի տարածաշրջանային կոմիտեի հետ, զարգացնել տեղեկատվական աշխատանքները:

Հիմնախնդիր 11

Կառավարման արդյունավետության և վարչական ծառայությունների որակի բարձրացում:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Հստակեցնել լիազորությունների և պատասխանատվության բաշխումը կառավարման տարբեր մակարդակների միջև:
- Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել և խորացնել ուսանողների մասնակցությունը ակադեմիայի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում, բարձրացնել կառավարման տարբեր մարմիններում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը:
- Ապահովել կառուցողական համագործակցության զարգացումը ակադեմիայի կառավարման, ուսանողական, տնօրինական և այլ խորհուրդների միջև:
- Ստեղծել ներքին աուդիտի համակարգ և ապահովել մշտական մոնիտորինգ ստորաբաժանումների գործունեության նկատմամբ: